# ՄԱՐՄԱՇԵՆԻ ԲԺՇԿԱԿԱՆ ԱՄԲՈՒԼԱՏՈՐԻԱ ՊՈԱԿ

## Զարգացման եռամյա ծրագիր

*«Մարմաշենի բժշկական ամբուլատորիա» ՊՈԱԿ –ի զարգացման և կառավարման ծրագիրը մշակելիս հիմք է ընդունվել գործունեությունը կարգավորող օրենսդրական և նորմատիվային փաստաթղթերը, ինչպես նաև առողջապահության ռազմավարությունը:*

Ամբուլատորիայի գործունեության պլանավորման հիմնական ուղղություններն են հանդիսանում կառավարման համակարգի կատարելագործումը՝ բուժաշխատողների պարբերաբար վերապատրաստումը և աշխատակիցներին դրամական հավելավճարները, շենքի տարածքային պայմանների բարելավումը, բժշկական սարքավորումներով, գործիքներով և գույքով հագեցվածության բարձրացումը՝ ելնելով գործնեության առանձնահատկությունից:

## Կառավարման համակարգի կատարելագործում և նոր ծառայությունների ստեղծում

Բուժ. հիմնարկի կառավարման հիմնական կանոնները սահմանված են գործող օրենսդրությամբ և կազմակերպության կանոնադրությամբ, հետևաբար զարգացման ծրագիրը այս ուղղությամբ պետք է առնչվի գլխավորապես ամբուլատորիայի ներքին կառուցվածքի զարգացմանը:

«Մարմաշենի բժշկական ամբուլատորիա» ՊՈԱԿ-ը սպասարկում է 4 գյուղերի ազգաբնակչության՝ Մարմաշեն, Վահրամաբերդ, Կապս և Լենգեպ, որոնց ընդհանուր բնակչության թիվը կազմում է 3128 բնակիչ, որից 0-18տ 731, մեծահասակ 2397: Բնակչության առողջության առաջնային պահպանման որակը բարձրացնելու նպատակով գտնել դոնոր կազմակերպություններ, որոնք կաջակցեն լաբարատորիայի ստեղծմանը և վերջինիս կանոնավոր աշխատանքային պրոցեսին: Բուժաշխատողների պարբերաբար վերապատրաստումը և աշխատակիցներին դրամական հավելավճարներ, շենքի տարածքային պայմանների բարելավում, բժշկական սարքավորումներով, գործիքներով և գույքով հագեցվածության բարձրացում՝ ելնելով հիմնարկության գործնեության առանձնահատկությունից:

## Շենքի տարածքային պայմանների բարելավում

«Մարմաշենի բժշկական ամբուլատորիա» ՊՈԱԿ-ն ունի տիպային շինություն,որը 1998թ-ին վերականգնվել է ՀՀ կառավարության UNDP ARM և UMCOR-ի համատեղ ծրագրերով: Շինությունը կարիք ունի վերանորոգման.հոսանքի այլընտրանքային աղբյուրի, ինչպես նաև որոշակի գույքի սեղան, աթոռների; տարածքը կարիք ունի բարեկարգման, պարսպապատման և կանաչապատման: Համայնքապետարանի, տեղի գործարարների ներգրավման միջոցով լուծել նշված առաջադրանքները:

## Բժշկական սարքավորումներով և գործիքներով հագեցվածության բարձրացում

Հնարավոր միջոցներ ուղղել առկա բժշկական սարքավորումները նորագույն բուժ. սարքավորումներով և գործիքներով փոխարինելուն, այդ ծրագրերում ընդգրկելով դոնոր կազմակերպությունների, հովանավորների, ինչպես նաև պետական ծրագրերի:

«Մարմաշենի բժշկական ամբուլատորիա» ՊՈԱԿ-ի տնօրեն Ա. Գրիգորյան